



18. ԱՆՏԵՐ ԹԱՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ստամպոլ քաղաքում մի աղքատ մարդ էր կենում իրա օղլու-
շաղի հետ: Էս մարդի ունեցած-չունեցածը ալիբի-մալիբի քսան ձմե-
րուկ էր:

Մի օր նա տարավ իրա ձմերուկները ծախելու: Մեկ էլ տեհավ՝
մի մարդ էկավ ու նրանից բիլեք ուզեց: Նա շունքի բիլեթ շուներ,
իրա ձմերուկներից մինը տվեց ու նա տարավ բիլեթի տեղակ: Էսպես
սաղ օրը ամեն մի մարդ էկավ ու նրանից բիլեթ ուզեց. նա էլ բի-
լեթ որ շուներ, իրա ձմերուկներից էր տալի: Էնպես որ քսան ձմերու-
կից մնաց էրկու ձմերուկ: Էն նա նստեց կերավ ու դարտակ տուն
գնաց. ինչ ուներ-չուներ տանը ծախեց, մի ձեռք լավ շորեր կարել
տվեց ու մի գլուրդ առավ: Ինքն իրան ասեց. «Չունքի անտեր թաքա-
վորութիւն ա, ով ինչ ուզում ա՝ անում ա, ես էլ մի բան կանեմ»:
Էթում ա գերեզմանատան մոտ մի տուն շինում ու ինչ մեռել բերում
են թաղելու, նա ասում ա. «Օլեն փարասի վարմը»¹: Փող ա առ-
նում ու նոր թողում, որ թաղեն: Նա էսպես էլ հարստացավ:

Մի անգամ էլ թաքավորի մերը մեռել էր, բերին թաղելու,
համա էն մարդը ասեց.

— Օլեն փարասի վարմը:

Մինչև փող չառավ չթողեց, որ տանեն թաղեն: Էս բանը գնա-
ցին թաքավորին իմաց տվին: Թաքավորը նրան իրա մոտ կանչեց:

¹ Մեռելը փող ունի՝ (Մ. Կ.):

Նա ասեց.— Ես քսան ձմերուկ ունեի, տարա ծախելու. է՛ն սհաթը մի մարդ էկավ ու ըիլեթ ուզեց. փող շունեի, իմ ձմերուկներից էին տանում: Էսպեսով իմ բոլոր ձմերուկները տարան. ես մնացի պլուս: Ես ինքս ինձ մտածեցի, որ անտեր թաքավորութիւն ա, ես էլ մի բանով պարապեմ ու փող աշխատեմ. էսթավուց փեշակ բանացրի ու հարստացա:

Թաքավորը նրան վնաս չտվեց. նրա խելոքութեան հմար գեղեր տվեց, որ նա նրանցով ապրի:

